Հայտարարություն

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմում փորձագետ ներգրավելու վերաբերյալ

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմը ՀՀ քաղաքացիներին տեղեկացնում է մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության աշխատանքներում փորձագետ ներգրավելու մասին:

Աշխատանքների համառոտ նկարագիրը՝

Աջակցության ցուցաբերում վարչության կողմից համակարգվող ոլորտում ՀՀ կրթության, գիտության , մշակույթի և սպորտի նախարարության կողմից ավելացրած 10 ծրագրի իրականացման աշխատանքներին, որոնց ներդրումը հանգեցրեց բաժնի գործառույթների և ընթացիկ աշխատանքների ծանրաբեռնվածության ավելացման (նախահաշիվների և հաշվետվությունների ստուգում, ծրագրային ցուցանիշների ամփոփում, պայմանագրերի և համաձայնագրերի կազմում):

Փորձագետ ներգրավելու ժամկետը՝

Պայմանագիրը կնքվում է **վեց ամիս ժամկետով:**

Փորձագետի պարտականությունները՝

ցուցաբերում է աջակցություն մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսատնտեսական գործունեության ծրագրային ցուցանիշների ամփոփմանը, տարեկան նախահաշիվների և դրանցում կատարված փոփոխությունների ուսումնասիրությանը և վերլուծությանը, մարզային ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ ներկայացրած հաշվետվությունների վերլուծությանը, մարզային ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների բյուջետային միջոցների նպատակային օգտագործման և կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ուսումնասիրությանը:

Փորձագետին ներկայացվող պահանջները՝

– բարձրագույն կրթություն

– հանրային ծառայության 2 տարվա կամ ֆինանսատնտեսագիտական կամ հաշվապահական բնագավառի 3 տարվա մասնագիտական ստաժ
– Client-TREASURY համակարգով, համակարգչով և այլ տեխնիկական միջոցներով աշխատելու կարողություն:

Վարձատրության չափը՝ Պայմանագրային:

Փորձագետի պաշտոնը չի կարող զբաղեցնել այն անձը, ով պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիրառելու, օրենքով սահմանված փաորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք:

Ընտրությունը կատարելու եղանակը՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները Սյունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին (ք. Կապան, Նժդեհի 1) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակներով).

- գրավոր դիմում՝ (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
- աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ գունավոր լուսանկար՝ 3x4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ (ք. Կապան, Նժդեհի 1, ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմ, անձնակազմի կառավարման բաժին):

Փաստաթղթերն ընդունվում են 2026թ. սեպտեմբերի 9-ից սկսած ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար քաղաքացիները կարող են զանգահարել

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի (0285) 44275 հեռախոսահամարով:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 11/09/2026թ.: